ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ Գ. ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 17
ԷԼ. ՓՈՍՏ lusaxbyuridproc@mail.ru , ՀԵՌ. 093736010

N 043
«17» հուլիսի 2019 թ.

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ՀՀ Շիրակի մարզի <<Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի ուսուցչի թափուր տեղի համար 2019թ. օգոստոսի 6-ին հայտարարվել է մրցույթ: Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվել է <<Կրթություն>> շաբաթաթերթում:

Ձեզ է ներկայացվում մրցույթի մասին հայտարարության տեքստը:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 11171-13
17.07.19թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի << Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (7 դասաժամ, 35900 դրամ աշխատավարձ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4).
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փասաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019թ. հուլիսի 31-ը, ամեն օր՝ ժամը 10^{00} -ից 15^{00} -ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019թ. օգոստոսի 6-ին ժամը 14^{00} -ին Շիրակի մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Լուսաղբյուր, 4-րդ փողոց, շենք 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)736010 հեռախոսահամարով: